

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Աշխատանքի ծանրաբեռնվածությունը ուսումնական տարում կազմում է 1000 ժամ:

Պարտադիր պահանջներն են.

- 1) Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ)
- 2) Համապատասխան որակավորում տվյալ առարկան դասավանդելու համար
- 3) ՀՀ քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ)
- 4) Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (եթե առկա է)
- 5) Ինքնակենսագրություն (Ձև 5)
- 6) Դիմում (Ձև 1) / մեկ լուսանկար 3x4
- 7) ՀՀ-ում արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ

Փաստաթղթերի պատճենները ներկայացնել բնօրինակների հետ:

Առարկան ուսումնասիրողի պարտադիր պահանջները՝

- Միջնակարգ և ընդհանուր կրթությամբ ուսումնական հաստատություններում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի նպատակները, խնդիրները և մեթոդները
- Սովորողների գիտելիքներին և կարողություններին ներկայացվող պահանջների բովանդակությունը
- Միջնակարգ և ընդհանուր կրթությամբ «Հայոց լեզու» առարկայի դասընթացի բովանդակությունը
- «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ուսուցման մեթոդները, նրանց դասակարգումը և դրանց ուսուցման գործընթացում կիրառելու հնարավորությունները
- «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ուսումնական պարապմունքների կազմակերպման ձևերը, դասերի տեսակները, ժամանակակից դասերին ներկայավող պահանջները
- «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ուսումնական պարապմունքների կազմակերպման ձևերը, դասերի տեսակները, ժամանակակից դասին ներկայացվող պահանջները,
- «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները:
- Արտալսարանային պարապմունքների տեսակներն ու ձևերը և նրանց կազմակերպման առանձնահատկությունները
- Ուսուցման մեթոդները և դրանց օգտագործումը ուսումնադաստիարակչական գործընթացում
- «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի համար տրամադրված դիտակտիկ նյութերը, ցուցապատումները, դրանց պահպանման և օգտագործման կանոնները:

### **Փաստաթղթերն ընդունվում են՝**

«Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ»-ում 2024 թվականի սեպտեմբերի 19-ից մինչև հոկտեմբերի 02-ը ներառյալ, ամեն օր ժամը 10<sup>00</sup>-ից մինչև ժամը 16<sup>00</sup>-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

**Մրցույթը տեղի կունենա** 2024 թվականի հոկտեմբերի 07-ին ժամը 14<sup>00</sup>-ին, «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ»-ում:

Հասցեն՝ ք.Գյումրի, Մանուշյան 4թաղ, թիվ 30

Տեղեկությունների համար դիմել՝ +374 3-12-98, 093/184008

Էլ.հասցեն՝ [shtpq20@mail.ru](mailto:shtpq20@mail.ru)